Սայաթ Նովա

Հուր իս էշխով կըրակած

Հուր ի՛ս էշխով կըրակած,
Խոսկ իմ ասում առակած,
Իմ սիրմա-էրծաթ ախպեր՝
Օսկեշըրով վարակած:

Հանփուրիմ՝ սիրով հանփուր,
Վունց օր խեչին է դաստուր.
Օվ քիզ խայան մըտիկ տա՛
Դառնա էրկու աճկով կուր:

Վուր յիս ասի մ՝ իմացի,
Էշխի մեչը հիմնացի.
Ինձ հուրյան-բիրյան արիր,
Ասում իս թե՝ դիմացի:

Հուր ի՛ս, սիրով, սիրական,
Քիզի ղուլլուղ պատվական,
Հազար թուբլու կերակուր,
Սուրփ գինի անապական:

Պըխտուր սիրտըդ պարզ արա,
Բլբուլի պես փարզ արա,
Ասըձուն փա՞ռք, քաղկումն իս՝

Դարդրդ խանին արզ արա:

Արզ իս անում հազարին,
Հա՛ զարբաբին, հա՛ զարին.
Սիրտըս յարալու արիր՝
Աճկըս զու լա հա՛ զարին:

Հազ (արին) հազարի պիտի,
Էրած սըրտին ճար պիտի,
Յիս մե էշխի ջունուն իմ,
Ինձ մե դողրու յար պիտի;

Յարի լիզուն բըլբուլ է,
Դաստամազը սնբուլ է.
Սայաթ Նովեն լալիս է,
Մագա՞մ ղարիբ բըլբուլ է: